ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-21-79

# ՈՐՈՇՈՒՄ

« 20» հունվարի 2013թվականի N 2 - Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2013-2017ԹԹ. ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 –րդ հոդվածի 2-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ներկայացրած ծրագիրը՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքի զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

կողմ / 8/ դեմ / 0/ ձեռնպահ / 0 /

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ԲՈՒՂՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԻՐԶՈՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված թիվ 1
Ավշար համայնքի
ավագանու 18.01.2013թ.
նիստի թիվ 2-Ա որոշում

# ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 20013-2017թթ. ՔԱՌԱՄՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2012թ. սեպտեմբերի 9-ին կայացավ Ավշար համայնքի ղեկավարի ընտրություն:

Համայնքի ղեկավար ընտրվեց Անուշավան Աշոտի Մարգարյանը:

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով մշակվել և հաստատման է ներկայացվել Ավշար համայնքի զարգացման քառամյա (2013-2017թթ.) ծրագիրը:

Քառամյա ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերն ու արված առաջարկությունները:

Համայնքի զարգացման այս ծրագրով նախատեսվում է լուծել հետևյալ կարևոր խնդիրները:

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

| | |
|---|---|
| 1.1. Հիմք ընդունելով համայնքի առկա հնարավորությունները համայնքի ամենամյա բյուջեն կազմել և քննարկել հաշվի առնելով բնակչության, ավագանու առաջարկությունները: Եկամտային և ծախսային մասերը կազմել հաշվեկշռված: | Գյուղապետարանի աշխատակազմ, համայնքի ավագանի |

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

| | |
|---|---|
| 2.1.Գերեզմանոց տանող ճանապարհի ասֆալտապատում: | Համայնքի բյուջեի միջոցներով |
| 2.2. Խմելու ջրագիծ չունեցող փողոցներում ջրագծերի կառուցում | Համայնքի բյուջեի միջոցներով |

| | |
|---|---|
| 2.3. Գյուղամիջյան փողոցների ասֆալտապատում: | Համայնքի բյուջեի միջոցներով |
| 2.4. Համայնքի փողոցների խճապատում | Համայնքի բյուջեի միջոցներով |
| 2.5. Համայնքի փողացներում լուսավորության անցկացում | Համայնքի բյուջեի միջոցներով |
| 2.6. Համայնքի հրապարակի հարակից տարածքների կանաչապատում: | Համայնքի բյուջեի միջոցներով |

## 3. ՀՈԳԵՎՈՐ – ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

| | |
|---|---|
| 3.1. Առավել արդյունավետ դարձնել բնակչության մշակութային պահանջների բավարարմանը նպատակաուղղված միջոցառումների կազմակերպումը: | Գյուղապետարան ավագանի, մշակույթի տուն |
| 3.2. Մեծ շուքով նշել անկախության օրը, Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի օրը; | Գյուղապետարան ավագանի, մշակույթի տուն |
| 3.3. Աշխատանքներ տանել և ապահովել երիտասարդության մասնակցությունը համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը: | Գյուղապետարան ավագանի, մշակույթի տուն |
| 3.4. Կազմակերպել բնակչությանը զերծ մնալու աղանդներից | Գյուղապետարան մշակույթի տուն դպրոց |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ